

Մհեր Հարությունյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Հայաստանի պատմության թանգարան

mherharout@gmail.com

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒԹՅՈՒՆԱԼԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

Հիմնաբառեր. Արցախ, սահմանադրություն, բանակ, ինստիտուցիոնալացում, պաշտպանություն, անվտանգություն, պետականություն

Ներածություն

Արցախի Հանրապետության սահմանադրական զարգացումները, մասնավորապես 2006 և 2017 թվականների Սահմանադրությունները, մարմնավորում են մի ամբողջ ժամանակաշրջան, որն ընդգրկում է անցումային պետականաշինությունը, պատերազմի հետևանքների հաղթահարման գործընթացը և ինստիտուցիոնալ կայունության ձևավորումը: Արդի քաղաքական և իրավական իրադրության պայմաններում այս հարցի ուսումնասիրությունն առավել քան արդիական է, քանի որ սահմանադրական տեքստերում Ջինված ուժերի կարգավիճակի ամրագրումը դառնում է ոչ միայն իրավական երաշխիք, այլև պետության հիմնարար բնութագիրը՝ արտահայտելով դրա ինքնատիպությունը և արժեքային համակարգը:

Ուսումնասիրության առարկան Արցախի Հանրապետության 2006 և 2017 թվականների Սահմանադրություններում Ջինված ուժերի սահմանադրական կարգավիճակի ձևակերպումներն են: Նպատակն է վերլուծել այդ ձևակերպումների էվոլյուցիան՝ դրանք դիտարկելով որպես ինստիտուցիոնալ ինքնության բաղադրիչ:

Ուսումնասիրողի գլխավոր խնդիրներն են՝ ա) բացահայտել վերոհիշյալ երկու Սահմանադրությունների պատմաքաղաքական նախադրյալները, բ) ներկայացնել Ջինված ուժերի կարգավիճակի ամրագրումները երկու Սահմանադրություններում, գ) համեմատել տերմինաբանությունն ու ինստիտուցիոնալ մոդելները, դ) վերլուծել դրանց տեղը Արցախի պետականության հայեցակարգում:

Մեթոդաբանական հիմքում ընկած է համադրական վերլուծությունը՝ սահմանադրական տեքստերի, հանրաքվեների փաստաթղթերի (Легитимность Нагорно-Карабахской Республики 1995; Օհանջանյան 1998; Դավթյան 2002; Նա-

* Ստացվել է 31.07.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 27.08.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 09.12.2025 թ.:

սիրյան 2010), քաղաքական ու իրավական մեկնաբանությունների համադրումով: Օգտագործվել է նաև ինստիտուցիոնալ մոտեցումը՝ քաղաքական-իրավական ձևակերպումները դիտարկելով ինստիտուցիոնալ կառույցների կայացման համատեքստում:

Պատմագրական ուսումնասիրությունների շրջանակում թեմային անդրադարձ է եղել մասնակիորեն՝ քաղաքական պատմության (Աթանեսյան 2013 (անտիպ), 1–138), սահմանադրական իրավունքի (Հարությունյան 2016; Հովսեփյան 2016, 241–271; Հարությունյան 2018,103–110; Հարությունյան 2022, 10–26) և Արցախի Հանրապետության պատմության կամ դրա առանձին հիմնահարցերի ուսումնասիրությունների (Մինասյան 2018, 126; Բալայան 2022, 289–344; Լիպարիտյան 2022, 81–92, 109–118; Ավանեսյան 2022, 168–169) մեջ, սակայն Ջինված ուժերի սահմանադրական կարգավիճակը մնացել է խորապես չուսումնասիրված:

Ադրբյուրագիտական բազան ներառում է Արցախի Սահմանադրությունները, Սահմանադրական հանձնաժողովների¹ հաղորդագրություններ (Արցախի սահմանադրական հանձնաժողովն առաջարկում է 2022), պաշտոնական մեկնաբանություններ, ինչպես նաև մասնագիտական ու ակադեմիական հրապարակումներ (Սուվարյան 2021ա, 9–21; Սուվարյան 2021բ, 8–22; Սուվարյան 2022, 73–86; Սուվարյան 2024, 49–66):

Գիտագործնական նշանակությունը կայանում է Արցախում պետական ինստիտուտների զարգացման փորձի վերլուծության, սահմանադրական ձևակերպումների գնահատման և ապագա քաղաքական-իրավական հետազոտությունների հիմք ստեղծելու մեջ: Կիրառական տեսանկյունից՝ այն կարող է օգտակար լինել սահմանադրական իրավունքի, պետականության ուսումնասիրման և ինստիտուցիոնալ ինժեներիայի ոլորտներում:

**Արցախում սահմանադրական մտքի սկզբնավորումը.
Վաչագան Բարեպաշտի օրինակարգման փորձը**

Արցախում սահմանադրական իրավագիտության արմատները սկիզբ են առնում դեռևս վաղ միջնադարից, երբ 5-րդ դարում (Ուլուբաբյան 1969, 60) տեղի ունեցած Ադվենի ժողովում Վաչագան Բարեպաշտ թագավորը հաստատեց այսպես կոչված «**Սահմանադրություն կանոնական**» մայր օրենքը (Հովհաննիսյան 1967, 265–274; Հովսեփյան 2012, 35–56; Գրիգորյան 2017, 115–126; Adamyan 2023, 193–204): Այս փաստաթուղթը, որը հիշատակվում է Մովսես Կաղանկատվացիի պատմագրության (Կաղանկատուացի 1860, 183–189) մեջ, համարվում է **կոլեկտիվ կերպով ընդունված առաջին օրինակարգող, հիմնարար իրավական փաստաթուղթը**, որում միահյուսված են **պետական, եկեղեցական, սոցիալական և անվտանգային** գործառույթներ:

1 Դրանք ունեցել են պաշտոնական այսպիսի անվանումներ. **Սահմանադրական հանձնաժողով** (հանրապետության նախագահի գլխավորությամբ ստեղծվել էր տակավին 1996 թվականին, բայց գործունեություն չի ծավալել), **ԼՂՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով** (ստեղծվել է 2016 թ. մարտի 21-ին), **Արցախի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով** (ստեղծվել է 2022 թ. հունվարի 31-ին):

Ինչպես վկայում է Կ. Ղահրամանյանը՝ այս սահմանադրական ակտով նախատեսվում էր՝

- հասարակական բարոյականության ամրապնդում,
- եկեղեցական կարգապահություն,
- վարչական ու արքունական գործառույթների սահմանում,
- **մեր թեմայի տեսանկյունից թերևս ամենից էականը՝ թեկուզ և անուղղակի՝ պաշտպանական գործառույթների ենթարկում իրավական սկզբունքներին:**

Թեև այդ մասին ուղղակի դրույթներ վերոհիշյալ պատմիչը մեզ չի փոխանցել, բայց և այնպես կարելի է ենթադրել, որ ճանաչվել է ռազմական ծառայության՝ որպես պետական պարտականության՝ իրավագոր բնույթը, ինչը գտնվում էր թե՛ թագավորի, և թե՛ հոգևոր իշխանության՝ որպես պետության դատական գործառույթ իրացնողի (Վաչագան թագավորի սահմանադրությունը 2017, 46), ուշադրության կենտրոնում: Ամենայն հավանականությամբ սահմանվել էին պարտավորություններ գորահավաքի, բերդերը անառիկ պահելու, թշնամուն ապաստան չտրամադրելու և զինվորական կարգապահության նկատմամբ:

Այս ամենը թույլ է տալիս հնարավոր համարել Արցախի տարածքում դեռևս վաղ շրջանում ձևավորված **հասարակություն-պետություն-քանակ** փոխադարձության իրավական ընկալումը՝ որպես համախմբվածության և ինքնապաշտպանության ինստիտուցիոնալ դրսևորում:

Սահմանադրական և ռազմաիրավական գործընթացների սկզբնավորումը պատերազմի պայմաններում

Արցախի Հանրապետությունում զինված ուժերի և առհասարակ ազգային անվտանգության ապահովման համակարգի սահմանադրական ինստիտուցիոնալացման իրավաքաղաքական հիմքերը դրվեցին հայկական երկրորդ հանրապետության կազմավորման գործընթացում, որն ունեցել է իրավաքաղաքական երեք հանգրվան. ա) 1988թ. փետրվարի 20-ից 1991թ. սեպտեմբերի 2; բ) 1991թ. սեպտեմբերի 2-ից դեկտեմբերի 10; գ) 1991թ. դեկտեմբերի 10-ից 1992թ. հունվարի 8 (Հարությունյան 2015, 39–40; Աթանեսյան 2013, 62–76):

1991թ. դեկտեմբերի 28-ին, չդադարող հրետակոծությունների, զինված հարձակումների և անվտանգային լուրջ սպառնալիքների պայմաններում, տեղի ունեցան Արցախի Հանրապետության Գերագույն խորհրդի ընտրությունները: Նորաստեղծ օրենսդիր մարմնի ձևավորումը միայն քաղաքական ինստիտուցիոնալացման քայլ չէր, այլև կարևոր փուլ էր պետական ինքնապաշտպանության և անվտանգության հիմնահարցերի օրենսդրական կարգավորման ուղին հարթելու գործում:

Վերլուծելով այդ գործընթացը՝ կարելի է արձանագրել, որ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Արցախում ռազմաօրենսդրական դաշտի ձևավորումը որոշ դեպքերում շեղվել է դասական սահմանադրական գործընթացների տրամաբանությունից: Դրանք թելադրված էին ռազմական դրությամբ և

հրատապ օրակարգով: 1991–1994 թթ. ընթացած պատերազմի պայմաններում առաջնահերթ էր իրավական հիմքերի ստեղծումը՝ զորակոչի կազմակերպման և զինծառայողների սոցիալական պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այս համատեքստում Արցախի համար ուղենշային էին նախ Հայաստանի Հանրապետության «Զինապարտության մասին» և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքները (Հարությունյան 2024, 34):

Արցախում պաշտպանության ոլորտի իրավական կարգավորման առաջին կարևոր նախաձեռնություններից էր ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1992 թ. փետրվարի 24-ին ընդունած որոշումը, որով տարերայնորեն ձևավորված զինված ջոկատները ճանաչվում էին որպես ԼՂՀ ինքնապաշտպանության ուժեր (ԻՊՈՒ) և ենթարկվում միասնական հրամանատարության: Որոշման տեքստում արձանագրված էր, որ անհրաժեշտ է հանրապետության բոլոր զինապարտների վերահաշվառում, զորակոչային տարիքի քաղաքացիների հաշվառում և ԻՊՈՒ կազմում ընդգրկված անձանց ճանաչում որպես զորակոչվածներ (ԼՂՀ ԳԽ նախագահության որոշումը 1992, 24; Հարությունյան 2015, 57): Այս որոշումը ոչ միայն պետական կարգավիճակ է շնորհել ԻՊՈՒ-ին, այլև իրավական հիմքի վրա դրել ինքնապաշտպանական ուժերի ինստիտուցիոնալացումը:

ԼՂՀ Գերագույն խորհրդի օրենսդրական կարևոր նախաձեռնություններից կարելի է համարել 1992 թ. հունիսի 6-ին «Զինապարտության մասին» Արցախի Հանրապետության օրենքի («Զինապարտության մասին» 1992, 21–37; Հարությունյան 2024, 35) ընդունումը և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության մասին» օրինագծի առաջին ընթերցմամբ հաստատումը (ԼՂՀ ԳԽ որոշումը 1992բ; Հարությունյան 2024, 35): Զուգահեռաբար ընդունվեց որոշում «Զինվորական հանցագործության համար քրեական պատասխանատվության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրառման վերաբերյալ (ԼՂՀ ԳԽ որոշումը 1992ա; Հարությունյան 2024, 35):

Ռազմական օրենսդրության համակարգման փուլերը և ինստիտուցիոնալ զարգացումները

Պաշտպանության բանակի գործունեության օրենսդրական հիմքերի ձևավորումը ռազմաքաղաքական օրհասական պայմաններում փոխարինվեց ռազմաքաղաքական հարաբերական կայունության շրջանում ռազմաիրավական կարգավորման երկրորդ փուլով: Այս շրջափուլը (1995–1998 թթ.) ՀՀ պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Վահան Շիրիսանյանը բնութագրել է որպես մի ժամանակահատված, երբ արդեն գործ ունենք ոչ միայն իրավական ապահովման, այլև զարգացման ռազմավարական պլանավորման անհրաժեշտության գիտակցման հետ: Այդ տարիներին ընդունվեցին Հայաստանի Հանրապետության «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության մասին», «Զորահավաքային նախապատրաստության մասին» և այլ հիմնարար օրենքներ (Շիրիսանյան 1999, 62), որոնք, փաստորեն, տեղայնացվեցին ԼՂՀ-ում և ունեցան համապատասխան իրավակիրառելիություն:

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա.Ս. Նազարյանը, իր հերթին, ՀՀ պաշտպանության ոլորտի օրենսդրական գործընթացը բաժանել է երեք փուլերի. 1990–1997 թթ.՝ ներառում էր ճգնաժամային օրենսդրական արձագանքը ռազմական գործողությունների պայմաններում, 1997–2005 թթ.՝ ավարտվում էր ՀՀ սահմանադրական բարեփոխումներով, 2005–2008 թթ.՝ սկսվում էր 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով և շարունակվում մինչև հողվածը գրելու ժամանակներով (Նազարյան 2008, 37–38):

Նմանատիպ փուլայնություն նկատելի է նաև Արցախի օրենսդրական պրակտիկայում: Պաշտպանության բանակի կենսագործունեությունը խարսխված էր թե՛ ՀՀ օրենսդրության և թե՛ Արցախի Հանրապետության կողմից ընդունված համարժեք օրենքների վրա: Դրանց թվում են՝

- 1995 թ. սեպտեմբերի 11-ին ընդունված և 1998 թ. մարտի 19-ին փոփոխված «Ռազմական դրության մասին» օրենքը (Օրենքների ժողովածու 2001, 21–22),
- 1997 թ. մարտի 16-ին ընդունված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների զինվորական կոչումների մասին» օրենքը (Օրենքների ժողովածու 2001, 121–122),
- 1999 թ. հունվարի 20-ին ընդունված «Զենքի մասին» օրենքը (Օրենքների ժողովածու 2001, 394–405),
- 1999 թ. հունվարի 22-ին ընդունված «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքը (Օրենքների ժողովածու, 2001, 406–415; ԼՂՀ օրենքը 1999, 3–5),
- 1999 թ. մայիսի 20-ին ընդունված «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը (Օրենքների ժողովածու 2001, 505–515):

Վկայակոչելի է նաև 1994 թ. նոյեմբերի 23-ին ընդունված որոշումը ռազմական դրության ժամկետը վեց ամսով երկարաձգելու վերաբերյալ: Այդ նիստում ԼՂՀ Գերագույն խորհուրդը քննարկել է նաև զորակոչին առնչվող օրենսդրական փոփոխություններ՝ ռազմական դրության պայմաններում գործող օրենքների ադապտացիայի շրջանակներում (ԼՂՀ Գերագույն խորհրդի նիստը 1994, 1):

Արցախի Հանրապետության զինվորական օրենսդրության զարգացումը որպես բանակաշինության ինստիտուցիոնալ հիմք

Արցախի Հանրապետության պաշտպանության ոլորտի ինստիտուցիոնալ կայացման գործընթացում առանցքային նշանակություն է ունեցել զինվորական օրենսդրության ձևավորումը, որի զարգացումն անմիջականորեն պայմանավորված է եղել հանրապետության պաշտպանունակության ապահովման հրամայականով: Առանց իրավական հենքի կատարելագործման անհնար էր պատկերացնել ոչ միայն բանակաշինության, այլև անվտանգային ընդհանուր համակարգի ամրապնդման ու ինստիտուցիոնալ կայունության ձևավորման գործընթացները:

1990-ականների վերջին և 2000-ականների առաջին տարիներին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պաշտպանության, անվտանգության և օրի-

նապահպանության հարցերի մշտական հանձնաժողովն իրականացրել է համակարգված աշխատանք՝ նպատակաուղղված զինվորական իրավական դաշտի կանոնակարգմանն ու օրենսդրական հենքի ամրապնդմանը: Երկրորդ գումարման ԱԺ-ի շրջանակում ընդունվել են մի շարք հիմնարար օրենքներ, այդ թվում՝ «Ռազմական դրության մասին», «Զինվորական կոչումների մասին» և «Զենքի մասին» օրենքները (Հարությունյան 2000, 3): Զուգահեռաբար, զգալի փոփոխություններ են կատարվել «Զինապարտության մասին» օրենքում, որն ի սկզբանե գործել էր դեռևս 1992թ. պատերազմական պայմաններում ընդունված տարբերակով (Հարությունյան 2024, 218):

Օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը թելադրվել է ռազմաքաղաքական իրավիճակի փոփոխությամբ: Նույնիսկ կայունության հարաբերական փուլերում, օրենսդիր և գործադիր մարմինները ձգտել են իրավական գործիքակազմը հարմարեցնել նոր իրողություններին՝ զինծառայության անցման պայմանները համապատասխանեցնելով խաղաղ ժամանակաշրջանի պահանջներին: Այդ նպատակով նոր օրենքով, օրինակ, գորակոչի տարիքային շեմը 17-ից բարձրացվել է մինչև 18 տարեկանը՝ որպես ստորին սահման: Մինևնույն ժամանակ, սահմանվել են արտոնյալ մոտեցումներ որոշ մասնագիտական խմբերի նկատմամբ, մասնավորապես՝ պետական բուհերում իրավաբանական, բժշկական և տնտեսագիտական ուղղություններով սովորող ուսանողները ժամանակավորապես ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից (Հարությունյան 2000, 3):

Հանձնաժողովի և գործադիր իշխանության համագործակցությամբ ձևավորվել է օրենսդրական քաղաքականություն, որը փորձել է զուգորդել պետության պաշտպանական առաջնահերթությունները քաղաքացիների կրթության իրավունքի ու սոցիալ-տնտեսական կայունության պահանջների հետ: Սակայն նման տարբերակված մոտեցումները որոշակի շեղումներ են առաջացրել բուհական դիմորդների հոսքերում՝ մասնավորապես իրավագիտության ոլորտում: Այդ երևույթները թուլացնելու նպատակով առաջարկվել է բուհերում ռազմական ամբիոնների ներդրում, ինչը սակայն պահանջել է հավելյալ ֆինանսական ռեսուրսներ և կառավարման բարելավում՝ հատկապես կոռուպցիոն ռիսկերն ու զինծառայությունից խուսափելու հնարավորություններն իսպառ բացառելու համար:

Իրավաբանական համակարգում զինծառայության կանոնակարգման ուղղությամբ կատարած առանցքային քայլերից մեկը 2002թ. նոյեմբերի 30-ին ընդունված «Պաշտպանության մասին» օրենքն էր (Հարությունյան 2024, 220), որը դարձավ ռազմավարական նշանակության հիմնարար իրավական ակտ՝ ամրագրելով պաշտպանության ոլորտի ընդհանուր սկզբունքներն ու պետության պարտականությունները զինված ուժերի նկատմամբ: Դրան զուգահեռ, ընդունվել կամ փոփոխվել են մի շարք այլ օրենսդրական ակտեր, այդ թվում՝ 1999թ. ընդունված «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքի բովանդակության մեջ մինչև 2006թ. հունվարի կեսերը կատարվել է ութ փոփոխություն (Հարությունյան 2024, 220):

2001թ. վերջից օրենսդրական դաշտը համալրվել է նաև «Զինապարտության մասին» նոր օրենքով², որն առավել համակարգված կերպով սահմանել է զինվորական հաշվառման, պատրաստության, գորակոչի և պահեստագործի կազմակերպման ընթացակարգերը՝ համապատասխանեցված նոր իրավիճակին: Այս օրենքը, որում կատարվել են նաև հետագա փոփոխություններ, հիմնականում ուղղված է եղել զինձառայության անցկացման գործընթացի արդիականացմանը և անվտանգության ռազմավարության իրավական հիմքերի ամրապնդմանը (Հարությունյան 2024, 220–221):

Ըստ այդմ, կարելի է փաստել, որ Արցախի Հանրապետությունում ռազմական օրենսդրության կայացման գործընթացը ոչ միայն արձագանքել է ներկա ռազմաքաղաքական մարտահրավերներին, այլև ձևավորել է պաշտպանական ինստիտուցիոնալ համակարգի ինքնուրույն իրավական հենք՝ հիմնված ազգային անվտանգության ռազմավարական նպատակների վրա:

Զինված ուժերի սահմանադրական ինստիտուցիոնալացման գործընթացը

Արցախի Հանրապետության սահմանադրական զարգացումները պետք է դիտարկել ոչ միայն իրավաբանական տեքստերի փոփոխության, այլև պատմաքաղաքական իրողությունների համատեքստում, որոնք խորը ազդեցություն են թողել ինստիտուցիոնալ ձևավորման ընթացքի վրա: 2006 և 2017 թվականների սահմանադրությունները ներկայացնում են Արցախի պետականության հասունացման և ինքնիշխան կառավարման հաստատման երկու տարբեր փուլեր, որոնցում էական դեր է վերապահվել Զինված ուժերի կարգավիճակի սահմանադրական ամրագրումներին:

2006թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով Արցախի Հանրապետության Սահմանադրության ընդունումը նոր հեռանկարներ բացեց պաշտպանական ոլորտի օրենսդրության զարգացման համար, քանի որ, ինչպես մասնագետներն են նկատել, «իրավագիտության մեջ ընդունված է, որ օրենսդրության զարգացման ռազմավարական ծրագրի հիմքը պետք է լինի Սահմանադրությունը, որը ոչ միայն երկրի օրենսդրության ստեղծվելիք համակարգի հիմքն է, այլև դրա հետագա զարգացման և կատարելագործման ուղեցույց ծրագիրը, քանզի սահմանադրական նորմերը ելակետ ու խթան են օրենսդրության ամբողջ համակարգի և նրա առանձին ճյուղերի ձևավորման համար» (Նազարյան 2008, 38–39):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 11-րդ հոդվածի 1-ին ենթակետում ամրագրված է, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը»: Իսկ 2-րդ ենթակետում սահմանված է, որ «Զին-

² Թեև սույն օրենքի 2-րդ հոդվածում արձանագրված է, որ «Զինապարտության մասին օրենսդրությունը բաղկացած է Արցախի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» Արցախի Հանրապետության Սահմանադրական օրենքից, միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից», բայց դրանց մի մասը ընդունվել է ավելի ուշ:

ված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո» (Սահմանադրություն 2006, 6): Վերջին դրույթը, փաստորեն, սահմանել է Արցախի Հանրապետության զինված ուժերի՝ քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվելու ահրաժեշտությունը: Այդ սահմանադրական պահանջին համապատասխանող սրբազրումների ու փոփոխությունների կարիքը զգացվել է պաշտպանության ոլորտի օրենսդրական կարգավորման հարթությունում:

Սահմանադրության 57-րդ հոդվածում ամրագրված է, որ «յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանությանը» (Սահմանադրություն 2006, 17):

60-րդ հոդվածում, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրների շարքում, ամրագրված է. «3) դրսևորել առանձնահատուկ հոգածություն հաշմանդամ ազատամարտիկների և զոհված ազատամարտիկների ընտանիքների նկատմամբ» (Սահմանադրություն 2006, 18):

Սահմանադրության 3-րդ գլուխը, որը սահմանել է հանրապետության Նախագահի լիազորություններն ու պարտականությունները, պարունակում է 61-րդ հոդվածը, որտեղ նշված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի գլխավոր հրամանատարի հետևյալ գործառույթները.

1. Հանրապետության Նախագահը պետության գլուխն է:

2. Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

3. Հանրապետության Նախագահը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է» (Սահմանադրություն 2006, 19):

68-րդ հոդվածում անվտանգության, պաշտպանության և ռազմական ոլորտներում հանրապետության Նախագահի հետևյալ լիազորություններն են.

11) կազմավորում է անվտանգության խորհուրդ և նախագահում այն, կարող է կազմավորել խորհրդակցական այլ մարմիններ.

13) զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում և ազատում է զինված ուժերի ու այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը.

14) Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ սանձազերծվելու դեպքերում հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին (Սահմանադրություն 2006, 22):

Զինված ուժերի օգտագործման կամ ռազմական դրություն հայտարարվելու դեպքերում իրավունքի ուժով գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:

Ռազմական դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով (Սահմանադրություն 2006, 23):

Այսպիսով, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունը, հատկապես 2006 թ. տարբերակում, սահմանում է պաշտպանության ինստիտուցիոնալ կառուցվածքի հիմնական հիմքերը՝ համադրելով պետական անվտանգությանը վերաբերող ռազմաքաղաքական գործառնություններն ու սահմանադրական հսկողության մեխանիզմները: Հոդված 11-ը հիմք է հանդիսանում պաշտպանության համակարգի երկակի բնույթի ըմբռնման համար. մի կողմից՝ որպես պետության ինքնիշխանության, անվտանգության և տարածքային ամբողջականության ապահովման գերակա երաշխիք, մյուս կողմից՝ որպես ժողովրդավարական քաղաքացիական կառավարման ենթակա կառույց:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության պահանջի սահմանադրական ամրագրումը՝ 11-րդ հոդվածի 2-րդ ենթակետում, արտահայտում է լիբերալ-դեմոկրատական ռազմաքաղաքական մտածողության ազդեցությունը: Սա համապատասխանում է միջազգային իրավունքի և ժողովրդավարական պետությունների փորձին, որի համաձայն՝ բանակը պարտավոր է չեզոք մնալ քաղաքական գործընթացներից և լինել հաշվետու ժողովրդավարական ինստիտուտներին:

Սահմանադրության 57-րդ և 60-րդ հոդվածները շեշտադրում են պաշտպանության նկատմամբ հանրային պատասխանատվության սկզբունքը, քաղաքացիների պարտականությունն է պաշտպանել պետությունը, իսկ պետության պարտականությունն է ցուցաբերել սոցիալական հոգածություն պատերազմից տուժած խավերի նկատմամբ: Այս դրույթները վկայում են ոչ միայն ազգային անվտանգության համապարփակ ըմբռնման մասին, այլև պաշտպանության համակարգում մարդու իրավունքների և սոցիալական արդարության սկզբունքների ներառման կարևորության մասին:

Հանրապետության Նախագահի դերը՝ որպես Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի, մանրամասն սահմանվում է Սահմանադրության 3-րդ գլխում և 68-րդ հոդվածում: Նախագահը ոչ միայն ապահովում է իշխանությունների փոխհամագործակցությունն ու Սահմանադրության պահպանումը, այլև ստանձնում է ռազմաքաղաքական պատասխանատվության կենտրոնական դեր, ներառյալ՝ ռազմական դրություն հայտարարելու, զորահավաք իրականացնելու և Զինված ուժերի օգտագործման որոշում կայացնելու լիազորությունները:

Այս լիազորությունների շրջանակը վկայում է ուժեղ նախագահական համակարգի առկայության մասին՝ պետական իշխանության կենտրոնացման միտումով հատկապես անվտանգության ոլորտում: Մինևույն ժամանակ, օրենքով սահմանված է նաև Ազգային ժողովի ներգրավումը ռազմական դրության իրավական ռեժիմի հաստատման գործընթացում, ինչը սահմանադրական հսկողության և ինստիտուցիոնալ հավասարակշռության տարր է:

Ընդհանուր առմամբ, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունը ձևավորում է պաշտպանության ինստիտուտի իրավական և քաղաքական հիմնախարիսխը՝ ապահովելով դրա գործունեության լեգիտիմությունը, ժողովրդավարական վերահսկողությունը և հանրային ներգրավվածությունը: Սակայն նաև ակնհայտ է, որ նշված դրույթների գործնական կիրառումը պահան-

ջում էր հետագա օրենսդրական սրբագրումներ և քաղաքական կամք՝ քաղաքացիների իրավունքների և անվտանգության պաշտպանությունը ռազմական կառույցների գործունեության առաջնային նպատակը դարձնելու ուղղությամբ:

2006 թվականի Սահմանադրությունն ընդունվեց Ադրբեյջանի նախաձեռնած զավթողական պատերազմում զինադադարի հաստատումից հետո ձևավորված ռազմաքաղաքական կայունության պայմաններում: Այս փաստաթուղթը միտված էր ամրագրելու անկախ պետականության հիմքերը և համակարգելու օրինական կառավարման մոդելը: Այդ շրջանում Արցախը գտնվում էր փաստացի ինքնիշխանության, սակայն միջազգային չճանաչված կարգավիճակի մեջ: Սահմանադրական կարգավորման կարիքը բխում էր թե՛ ներպետական իրավական հստակեցման պահանջից, թե՛ միջազգային հանրության առջև իրավաքաղաքական ինքնության առավել հստակ ներկայացման անհրաժեշտությունից:

Ի տարբերություն դրան, 2017 թվականի Սահմանադրությունը կազմվել և ընդունվել է մի շրջանում, երբ Արցախի Հանրապետությունը արդեն ձգտում էր ինստիտուցիոնալ կայացման նոր մակարդակի: Արդեն ձևավորված պետական ինստիտուտները պահանջում էին իրավական վերաիմաստավորում՝ ըստ ժամանակակից կառավարման չափանիշների և անվտանգության նոր մարտահրավերների: Այդ շրջանում խորացել էր նաև Արցախի և Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական համագործակցությունը, ինչը, իր հերթին, առաջ էր բերում Զինված ուժերի դերի և կարգավիճակի առավել ճշգրիտ սահմանադրական ձևակերպման անհրաժեշտություն:

Երկու սահմանադրություններն էլ միտված էին պաշտպանության և անվտանգության համակարգի կարգավիճակի հաստատմանն ու իրավական հենքի ամրապնդմանը: Այս համատեքստում Զինված ուժերի սահմանադրական կարգավիճակի ամրագրումը կարելի է դիտարկել որպես ոչ միայն իրավական, այլև քաղաքական քայլ՝ ուղղված պետականության ինստիտուցիոնալացումն ամբողջացնելու և պաշտպանունակությունը օրինական կառույցով երաշխավորելու համար:

2006 թվականի Սահմանադրությունը և Ձինված ուժերը

ԼՂՀ 2006 թվականի Սահմանադրության ընդունումը նշանավորեց նոր փուլ Արցախի պետականաշինության գործընթացում՝ այն որպես ինքնակառավարվող իրավական համակարգ հաստատելու նպատակով: Այս Սահմանադրությունը ոչ միայն ամրագրում էր ժողովրդավարական կառավարման հիմունքները, այլև փորձում էր սահմանադրական կարգի ներքո համակարգել ազգային անվտանգության և պաշտպանության հիմնահարցերը: Զինված ուժերի կարգավիճակի սահմանադրականացումն այս համատեքստում արտացոլում է պատերազմի փորձով անցած հանրապետության անվտանգության սկզբունքային մոտեցումները:

Սահմանադրության տեքստում Զինված ուժերի մասին ուղղակի անդրադարձը կատարվում է մի քանի դրույթներում, մասնավորապես՝ **Հոդված 11**-ում՝ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորման համատեքստում, ինչպես նաև **Հոդված 99**-ում, որը նախատեսում է պաշտպանության նախարարության համակարգը և ուժային մարմիններ:

րի կազմակերպումը: Չնայած դրույթների հարաբերական ընդհանրականությա-
նը, այդ ձևակերպումները վկայում են այն փաստի մասին, որ պաշտպանության
ոլորտը դիտարկվել է որպես պետականության կենսունակության հիմնասյուն:

Վերլուծելով սահմանադրական կարգավորումները, կարելի է նկատել, որ
2006 թվականի Սահմանադրությունն ուղղակիորեն չի ստեղծում ինքնուրույն ռազ-
մական դոկտրին կամ ամրագրում պաշտպանության բանակի մանրամասն կա-
ռուցվածքը: Դրա փոխարեն, սահմանադրությունը ձևավորում է ընդհանրական
իրավական միջավայր, որում Ջինված ուժերը դիտվում են որպես պետության
պաշտպանական ինստիտուտների առանցքային բաղադրիչ: Այս մոտեցումը պայ-
մանավորված էր մի կողմից՝ միջազգային չճանաչված կարգավիճակով, որի պայ-
մաններում ռազմական համակարգի խիստ սահմանադրականացումը կարող էր
դիտարկվել որպես քաղաքականապես ռիսկային քայլ, իսկ մյուս կողմից՝ նորան-
կախ պետականության կառուցվածքային կայունության ապահովման առաջնա-
հերթությամբ:

Բացի այդ, 2006 թվականի սահմանադրական տրամաբանության մեջ դիտ-
վում է մի շարք ինստիտուտների՝ այդ թվում Ջինված ուժերի՝ որպես պետական
վերահսկողության ենթակա կառույցների դասակարգում: Սա արտահայտվում է
իշխանությունների բաժանման և հսկողության մեխանիզմների ձևակերպումնե-
րում՝ Ազգային ժողովի, Նախագահի և կառավարության գործառույթների հստա-
կեցմամբ, ինչը հստակորեն վերաբերում է նաև պաշտպանության ոլորտին:

Այսպիսով, 2006 թվականի Սահմանադրության ընդունումը կարելի է գնա-
հատել որպես Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի իրավա-
կան ճանաչման առաջին լիակատար սահմանադրական հենքը: Թեև այն չներկա-
յացրեց համակարգային ռազմավարական տեսլական կամ դոկտրինալ հիմնավո-
րում, այդուհանդերձ ապահովեց պետական կառույցների և Ջինված ուժերի փոխ-
հարաբերությունների ինստիտուցիոնալ կարգավորումը՝ հիմնված օրենքի գերա-
կայության և պետական վերահսկողության սկզբունքների վրա:

2017 թվականի Սահմանադրությունը և Ջինված ուժերի ինստիտուցիոնալացումը

2017 թվականի Սահմանադրության ընդունումը Արցախի Հանրապետության
սահմանադրական զարգացման մեջ նշանավորեց նոր փուլ, որը միաժամանակ
անդրադառնում էր թե՛ կառավարման ձևի վերափոխմանը, թե՛ անվտանգության
ու ինքնապաշտպանության ինստիտուտների կառուցվածքային խորացմանը: Եթե
2006 թվականի Սահմանադրությունը գործարկվել էր պատերազմից հետո կայու-
նության և պետական հիմքերի ամրապնդման պայմաններում, ապա 2017 թվակա-
նի սահմանադրական փոփոխությունները հակադարձում էին նոր մարտահրա-
վերների՝ ռազմաքաղաքական, տարածքային և ինստիտուցիոնալ, միաժամանակ
արտացոլելով իրավական պետության շինարարության նախորդած տարիների
սահմանադրական փորձառությունը: Այդ փոփոխությունների համատեքստում
Ջինված ուժերի կարգավիճակի սահմանադրական ամրագրմանը տրվեց առավել
կենտրոնական և բովանդակային դեր:

Հարկ է ընդգծել, որ սահմանադրական վերանայման գործընթացը պայմանավորված էր ոչ միայն իրավական հղկման կամ կառավարման կառուցվածքային կատարելագործման պահանջով, այլև հավանական պատերազմական իրավիճակում պետական ինստիտուտների ճկունությունն ու արձագանքման կարողությունը բարձրացնելու հրամայականով: Արդեն 2017 թվականին արձանագրված սահմանադրական փոփոխությունները մասնավորապես արդարացվում էին արտաքին ռազմական սպառնալիքների սրմամբ, ինչպես նաև ուժեղ, կենտրոնացված գործադիր իշխանության ձևավորման անհրաժեշտությամբ՝ որպես կայուն անվտանգության երաշխիք: Այդ տեսակետից որպես ծանրակշիռ օրինակ հաճախ հիշատակվում էր Ադրբեյջանի սանձազերծած ագրեսիվ պատերազմի 2016 թվականի գարնանային ռազմարշավը, թեև հարկ է նշել, որ Արցախի Հանրապետությունը փաստացիորեն 1994 թվականից ապրում է պատերազմական պայմաններում, ինչը վաղուց էր հասունացրել նման ինստիտուցիոնալ փոփոխությունների անհրաժեշտությունը:

Սահմանադրական բարեփոխումների քաղաքական հայեցակարգում նախագահական կառավարման անցումը դիտարկվում էր որպես միջոց՝ մոբիլիզացիոն կարողությունները բարձրացնելու, նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսների արդյունավետ գործածման, ինչպես նաև արտակարգ իրավիճակներին օպերատիվ արձագանք ապահովելու համար: Միևնույն ժամանակ, այդ փոփոխությունները հարուցել էին հանրային քննարկումներ՝ կապված իշխանության գերկենտրոնացման հնարավոր ռիսկերի հետ: Սակայն այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ ժողովրդավարական համակարգերում զսպման և հակակշիռների մեխանիզմները՝ ներառյալ օրենսդիրի վերահսկողությունը և դատարանների անկախությունը, պետք է ծառայեն նման հավասարակշռության պահպանմանը: Այդ դրույթներն իրենց արտացոլումն էին գտել նաև նոր Սահմանադրության նախագծում, որի նպատակը ոչ միայն անվտանգության ապահովումն էր, այլև իրավական պետության և մարդու իրավունքների ինստիտուտների կայուն զարգացումը (Խմբագրի սյունակ 2016, 1):

Նախ և առաջ, Սահմանադրության նախաբանում արձանագրված է, որ Արցախի Հանրապետությունն առաջնորդվում է ազգային ինքնորոշման, ազատության և անվտանգության գաղափարներով, որոնք անքակտելիորեն կապվում են պաշտպանության համակարգի ամրապնդման հարցերի հետ: Սա վկայում է, որ զինված ուժերը ոչ միայն գործառնական կամ գործադիր միավոր են, այլ նաև պետական ինքնության բաղադրիչ:

Հոդված 14-ում հաստատվում է պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և սահմանադրական կարգի պահպանության վերաբերյալ դրույթը, որը, համադրվելով **Հոդված 93**-ի (*Նախագահի լիազորությունները*), **Հոդված 130**-ի (*Պատերազմ հայտարարելը և խաղաղություն հաստատելը*), **Հոդված 131**-ի (*Ռազմական դրությունը*) և **Հոդված 132**-ի (*Արտակարգ դրությունը*) ձևակերպումների հետ, նախանշում է ՊԲ-ի և ՋՈՒ-ի գործունեության սահմանադրական դաշտը: Առավել կարևոր է այն հանգամանքը, որ **Հոդված 94**-ում, որն ուղղակիորեն վերաբերում է ազգային անվտանգության բնագավառում հանրա-

պետության Նախագահի լիազորություններին, տեսանելի է պաշտպանության ոլորտում միացյալ պետական քաղաքականության գաղափարը, որը կազմակերպում և իրականացնում է պետությունը (Սահմանադրություն 2017, 72–73): Այս ձևակերպումը ենթադրում է պաշտպանության քաղաքականության և կառավարման համակարգի ռազմավարական ինստիտուցիոնալացում:

Հատուկ ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ 2017 թվականի Սահմանադրությունն ընդունվել է խորհրդարանական կառավարման համակարգի շրջանակում՝ նախագահականից անցում կատարելով նախագահամետ խորհրդարանական կարգին: Սա փոխեց նաև իշխանության ճյուղերի դինամիկան՝ տալով նոր ինստիտուցիոնալ գործառույթներ, որոնցից որոշներն ուղղակի կամ անուղղակի առնչվում էին պաշտպանության համակարգի վերահսկողությանը, օրենսդրական կարգավորմանը և պատասխանատվության ինստիտուտներին:

Բացի դրանից, 2017 թվականի սահմանադրական տեքստում առկա են ձևակերպումներ, որոնք կարևոր են Զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության և օրենքի գերակայության սկզբունքի գործադրման համար: Դրանք արտահայտվում են ուժային կառույցների հաշվետվողականության ու համադրելիության մեջ՝ թե՛ կառավարության, թե՛ Ազգային ժողովի, թե՛ դատարանների և մարդու իրավունքների պաշտպանին վերապահված վերահսկող գործառույթների միջոցով:

Այսպիսով, 2017 թվականի Սահմանադրությունը ոչ միայն վերափնտառավորում է Զինված ուժերի սահմանադրական կարգավիճակը, այլև այդ կարգավիճակը ներառվում է պետական ինստիտուցիոնալ կառուցվածքի ընդհանուր ճարտարապետության մեջ: Այն թույլ է տալիս խոսել Արցախի պաշտպանության համակարգի՝ ոչ միայն օրինականացված, այլև՝ ինստիտուցիոնալացվող բնույթի մասին՝ մի շրջանակում, որտեղ Սահմանադրությունը ոչ միայն քաղաքական փաստաթուղթ է, այլև ռազմավարական կայունության գործիք:

Չամենատական վերլուծություն 2006 և 2017 թվականների Սահմանադրությունների միջև

Արցախի 2006 և 2017 թվականների Սահմանադրությունների համեմատական դիտարկումը վկայում է ոչ միայն իրավական տեքստի վերանայման, այլև սահմանադրական մտածողության զարգացման, պետական ինստիտուտների վերակազմակերպման և ռազմավարական ինքնագիտակցության խորացման գործընթացի մասին: Երկու փաստաթղթերը ձևավորվել են տարբեր քաղաքական և անվտանգության միջավայրերում, որոնք պայմանավորել են ինչպես տերմինաբանական, այնպես էլ կառուցակարգային տարբերությունները:

4.1. *Տերմինաբանական և գաղափարական փեղաշարժ*: 2006 թվականի Սահմանադրությունը հիմնականում ներկայացնում էր Արցախը որպես ձևավորված, բայց օտար պետություններից չճանաչված պետականություն, որի առաջնային խնդիրներն էին կայունության պահպանումը, օրինապատշաճ եղանակով հռչակված ինքնիշխանության և պետական կառույցների գործառնական ապահովումը: Այդ տեքստում «զինված ուժեր» (նախ և առաջ հասկացվում էր «պաշտպանության բանակ»-ը), «պաշտպանություն» և «անվտանգություն» տերմինները

ներկայացվում էին առավելապես գործառնական մակարդակում՝ առանց դրանց ներգրավման ինստիտուցիոնալ խորը վերլուծության:

Ի տարբերություն, 2017 թվականի Սահմանադրությունը, վերաինաստավորելով պետական ինքնության հիմքերը, բանակը դիտարկում էր որպես ոչ միայն ֆունկցիոնալ, այլև՝ ինստիտուցիոնալ սուբյեկտ՝ ազգային ինքնորոշման և անվտանգության երաշխավոր: Այս տեքստում նկատվում է իրավաքաղաքական լեզվի զարգացման էական հատկացում. ավելի ընդհանրական տերմինները փոխարինվել են կոնկրետացված իրավաբանական ձևակերպումներով՝ ի նպաստ պետության պաշտպանական քաղաքականության ինստիտուցիոնալացման:

4.2. *Գործառույթների վերափոխում և վերահսկողության մոդել*: 2006 թվականի Սահմանադրությամբ նախագահի ձեռքում էին կենտրոնացած պաշտպանության կառավարման հիմնական լծակները՝ ներառյալ Ջինված ուժերի գլխավոր հրամանատարի գործառույթը: Սակայն գործադիր իշխանության վրա հիմնական վերահսկողությունը սահմանափակ էր՝ և խորհրդարանական, և՛ դատական հսկողության առումով: Վերահսկողական մեխանիզմների բացակայությունն ու թերզարգացած համակարգերը սահմանափակում էին քաղաքացիական վերահսկողության լիարժեք իրացումը:

Ի տարբերություն դրան, 2017 թվականի Սահմանադրությունն ամրապնդում է վերահսկողության մեխանիզմները՝ ընդլայնելով խորհրդարանի լիազորությունները, հստակեցնելով վարչապետի և նախարարական կազմի դերը պաշտպանության ոլորտի կառավարման գործում: Մինևույն ժամանակ, դատարաններին և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին տրվում են ավելի ընդգծված վերահսկողական գործառույթներ, որոնք կարող են գործել նաև ռազմական դրության պայմաններում:

Այս մոդելի միջոցով սահմանադրական համակարգը մոտեցվում է իշխանության տարանջատման սկզբունքներին և ապահովում է Ջինված ուժերի գործառույթների ավելի հստակ սահմանում, քաղաքականությունից համեմատաբար տարանջատում և օրինականության ապահովում:

4.3. *Պերսոնալության հայեցակարգի փոփոխությունը*: Համեմատելով երկու Սահմանադրությունները՝ ակնհայտ է, որ 2017 թվականի տեքստը ներկայացնում է պետականության զարգացման ավելի խորը հայեցակարգ: Եթե 2006 թվականի Սահմանադրությունը կենտրոնանում էր պետականության հռչակման և գործառնական կայունության վրա, ապա 2017 թվականի փաստաթուղթը պատկերում է արդեն կայունացած պետականություն, որն անցում է կատարում ինստիտուցիոնալ կայացման փուլ:

Սա դրսևորվում է մասնավորապես այն դրույթներում, որտեղ սահմանադրական տեքստը պատկերում է պաշտպանությունը որպես պետական ռազմավարության բաղադրիչ, ոչ թե միայն անվտանգային պատասխան: Այդ դիտարկման շրջանակում Ջինված ուժերի կարգավիճակի փոփոխությունը դառնում է ոչ միայն ինքնապաշտպանության, այլև պետական կառուցվածքային խորացման խորհրդանիշ:

4.4. Համարժեքություն միջազգային փորձին (ոչ ճանաչված պետությունների համարեքստում)

Արցախի սահմանադրական փոփոխությունների վերլուծությունն առավել իմաստավորված է դառնում նաև համեմատական դիտանկյունից՝ հաշվի առնելով այլ չճանաչված կամ մասնակի ճանաչում ունեցող պետությունների փորձը, ինչպիսիք են Աբխազիան (Конституция Республики Абхазия 1994), Հարավային Օսիան (Конституция Республики Южная Осетия 2001), Մերձդնեստրը (Constitution of the Pridnestrovian Moldavian Republic 2016), ինչպես նաև մասամբ Կոսովոն (Constitution of the Republic of Kosovo 2008), Սոմալիի Դաշնային Հանրապետությունը (The Constitution of the Republic of Somaliland 2005) կամ Հյուսիսային Կիպրոսը (Constitution of the Turkish Cypriot Constituent State 2005):

Այս համատեքստում նկատելի է, որ նշված պետությունների մեծ մասը, նույնիսկ արտաքին չճանաչման պայմաններում, ձգտել են ներքին ինստիտուցիոնալ համաչափության և սահմանադրականության ապահովմանը՝ իրենց անվտանգային համակարգերը դիտարկելով որպես ազգային ինքնության և իշխանության գործառույթների հիմնական բաղադրիչ: Արցախի Սահմանադրությունների զարգացումն այդ նույն տրամաբանության մեջ է՝ ամրապնդելով առհասարակ Սահմանադրության ոչ միայն իրավական, այլև քաղաքական լեգիտիմացման գործառույթը՝ ներքին ինքնիշխանության պայմաններում:

Ձինված ուժերի սահմանադրական ինստիտուցիոնալացման համադրական վերլուծության շրջանակում ուսումնասիրվել են մի շարք չճանաչված կամ մասնակի ճանաչված պետությունների՝ այդ թվում՝ Արցախի Հանրապետության (2006 և 2017 թթ.), Հարավային Օսիայի, Աբխազիայի, Սոմալիի, Մերձդնեստրի, Կոսովոյի և Հյուսիսային Կիպրոսի սահմանադրությունները: Համադրությունը նպատակ է ունեցել բացահայտել զինված ուժերի սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները, դրանց գործառույթների և լիազորությունների սահմանները, ինչպես նաև քաղաքական չեզոքության և քաղաքացիական վերահսկողության վերաբերյալ սահմանադրական մոտեցումները: Չճանաչված կամ մասնակի ճանաչված պետությունների սահմանադրություններում զինված ուժերը, որպես ինստիտուցիոնալ կառույց, ներկայացվում են իբրև պետականության ինքնիշխանության երաշխավոր, տարածքային ամբողջականության պահպանման գործիք, ինչպես նաև՝ սոցիալ-քաղաքական անվտանգության պահպանման մեխանիզմ: Հայտնի է, որ զինված ուժերի սահմանադրական կարգավորումը ոչ միայն իրավական նորմատիվ դաշտ է, այլև պետականության լեգիտիմության խորհրդանշական ու գործառնական վավերացում:

Արցախի Հանրապետության 2006 և 2017 թվականների Սահմանադրություններն ընդգծում են Պաշտպանության բանակի դերը՝ որպես ազգային ինքնության, անվտանգության և պետական ինստիտուցիոնալ կայունության առանցք: Հատկապես 2017 թվականի Սահմանադրության մեջ ակնհայտ է Ձինված ուժերի քաղաքական ինստիտուցիոնալացումը՝ Նախագահի անմիջական հրամանատարությամբ, ինչը մոտեցնում է այդ մոդելը պետության նախագահական կառավարման մոդելներին:

Մյուս կողմից՝ Հարավային Օսիայի և Աբխազիայի սահմանադրություններում նույնպես զինված ուժերը դիտարկվում են որպես պետականության հիմք, սակայն անվտանգության ծառայությունների և ներքին գործերի մարմինների գործառույթները հաճախ փոխկապակցված են: Մերձդնեստրի սահմանադրությունն առանձնանում է մանրամասն հղումներով՝ թե՛ զինված ուժերի արտաքին օգտագործման սահմանափակումների, թե՛ անվտանգության այլ մարմինների սահմանադրական կարգավիճակի առումով:

Սումայիի սահմանադրությունը ներառում է զինված ուժերի դերը նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտում՝ խաղաղության և կայունության ապահովման համատեքստում:

Հյուսիսային Կիպրոսի սահմանադրության մեջ շեշտադրված է, որ զինված ուժերի օգտագործումը հակասահմանադրական նպատակներով՝ ներքին ճնշման, իշխանության բռնազավթման կամ մարդու իրավունքների սահմանափակման համար, դիտվում է որպես ծանրագույն հանցագործություն: Նման մոտեցում մենք տեսնում ենք նաև Մերձդնեստրի սահմանադրությունում:

Ի վերջո, Կոսովոյի սահմանադրությունը սահմանափակում է զինված ուժերի գործառույթները՝ դրանք վերապահելով բացառապես ինքնապաշտպանությանը և միջազգային գործընկերային համագործակցությանը՝ ՆԱՏՕ-ի և ՄԱԿ-ի հետ: Սա արտահայտում է նրա ինստիտուցիոնալ ուղղվածությունը եվրոպական կառույցներին ինտեգրվելու համար:

Ջեռագա հետազոտական հեռանկարներ

Սույն ուսումնասիրությունը բացահայտեց մի շարք ուղղություններ, որոնք կարող են խորացնել Արցախի Հանրապետության Ջինված ուժերի սահմանադրական ինստիտուցիոնալացման վերաբերյալ իրավաքաղաքական վերլուծությունը: Մասնավորապես, անհրաժեշտություն է ձևավորվել անդրադառնալու ոչ միայն սահմանադրական կարգավորման սկզբունքներին, այլև ստորադաս իրավական ակտերի և կանոնակարգող փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրությանը՝ Ջինված ուժերի կառավարման ամբողջական իրավական ճարտարապետությունը վերականգնելու նպատակով:

Հատուկ կարևորություն է ստանում համաշխարհային համադրական փորձի ուսումնասիրությունը: Ջինված ուժերի սահմանադրական կարգավիճակի համեմատական վերլուծությունը այլ պետությունների օրինակով՝ հատկապես չճանաչված կամ միջազգային իրավական ոչ ստանդարտ կարգավիճակ ունեցող սուբյեկտների համատեքստում, կարող է նոր մեթոդաբանական հեռանկարներ առաջարկել ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մակարդակներում:

Հետագա հետազոտությունները կարող են ուղղվել պաշտպանական ոլորտում սահմանադրական նորմերի կիրառման պրակտիկ խնդիրների ուսումնասիրությանը, ներառյալ՝ Արցախի Հանրապետության իրավապահ և դատական համակարգի գործելակերպը, սահմանադրական վերահսկողության մեխանիզմները և նրանց ազդեցությունը ռազմական իրավունքի կայացման վրա: Հատկապես արդյունավետ կլինի նաև տարածաշրջանային ու միջազգային գործոնների հա-

մադրված գնահատումը՝ որպես ազդակ սահմանադրական ինստիտուտների կայունության և զարգացման համար:

Վերջին հաշվով, այս ուսումնասիրությունների գործնական արդյունքը կարող է ծառայել որպես հիմնավոր հենք Արցախի Հանրապետության պաշտպանական օրենսդրության վերանայման, կատարելագործման և ռազմավարական վերահիմնաստավորման համար՝ հատկապես հաշվի առնելով հայրենադարձության և անվտանգային ինքնիշխանության վերականգնման օրակարգային կարևորությունը:

Եզրակացություն

Այս ուսումնասիրության շրջանակներում վերլուծվել է Արցախի Հանրապետության Սահմանադրության 2006 և 2017 թվականների խմբագրություններում Զինված ուժերի սահմանադրական կարգավիճակի ամրագրումը: Մենք ցույց տվեցինք, որ երկու սահմանադրություններն էլ ձևակերպել են ռազմական ինստիտուտի՝ որպես պետականության հիմնական հիմքերից մեկի, իրավաքաղաքական կերպարը, սակայն այդ ձևակերպումներն արտացոլել են տարբեր քաղաքական իրողություններ և զարգացման փուլեր:

Համեմատական վերլուծության միջոցով պարզ դարձավ, որ 2006 թվականի Սահմանադրությունը ամրագրել է Զինված ուժերի առկայությունը՝ որպես կայացած ինստիտուտի, մինչդեռ 2017 թվականի խմբագրությունը փաստում է ռազմաքաղաքական լրջագույն ճնշումների ներքո համակարգի վերահիմնաստավորման փորձը: Ուսումնասիրվել են տերմինաբանական տարբերությունները, իրավական լեզվի հստակացումը և այդ փոփոխությունների քաղաքական ենթատեքստը:

Մենք հանգեցինք այն եզրակացությանը, որ սահմանադրական կարգավորումները ոչ միայն պետական կառուցակարգի փաստաթղթային արտահայտություն են, այլև քաղաքական կամքի և ինստիտուցիոնալ ինքնության ձևակերպում: Զինված ուժերի կարգավիճակը, որպես այդպիսին, հանդես է գալիս թե՛ ներքին ինքնիշխանության գործիք, թե՛ արտաքին լեզվափոխության ձգտման ցուցիչ:

Հոդվածում նաև ընդգծվել է Արցախի սահմանադրական փորձի կարևորությունը համադրական ուսումնասիրությունների համատեքստում, մասնավորապես չճանաչված կամ մասնակի ճանաչում ունեցող պետությունների իրավաքաղաքական փորձի համադրության առումով: Այսպիսով, մեր կատարած վերլուծությունը հիմքեր է ստեղծում ինստիտուցիոնալ զարգացման, սահմանադրական փորձի և քաղաքական ինքնության փոխառնչությունների հետագա խորացված ուսումնասիրությունների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

ԱԹՄՆԵՍՅԱՆ 2013 (անտիպ) – Աթանեսյան Է., *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մշակման քաղաքական-քաղաքագիտական ուղենիշները*, Երևան, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2013, «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ (ԿԳԿԱ), ֆ. 123 (Արցախի

- Հանրապետության ազգային անվտանգության և ռազմական դոկտրինների նյութեր), գ. 3, թթ. 1-145:
- ԱՌԱՋԱՐԿ 2022 – Արցախի սահմանադրական հանձնաժողովի առաջարկում է անցնել կառավարման կիսանախագահական համակարգի, <https://168.am/2022/09/23/1769903.html> (28.06.2025-10:25):
- «ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1992 – «Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Օրենքը, 6 հունիսի 1992թ., ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, ց. 1, պ. մ. 25, կ. 4, թ. 21-37:
- ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ 1994 – ԼՂՀ Գերագույն խորհրդի նիստը, «ԼՂ Հանրապետություն» (Արցախի Հանրապետության Գերագույն խորհրդի պաշտոնաթերթ), 30 նոյեմբերի 1994թ., № 27, էջ 1:
- ԼՂՀ ԳԻՆ ՆԱԽԱԳԱՇՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ 1992 – Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության որոշումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնապաշտպանության ուժերի մասին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ (ԼՂՀ ՊԱ), ֆ. 1, ց. 5, պ. մ. 13, կ. 1, թ. 24:
- ԼՂՀ ԳԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ 1992Ա – ԼՂՀ ԳԻՆ որոշումը «Զինվորական հանցագործության համար քրեական պատասխանատվության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը կիրարկելու մասին», Հ. Ն. -0048-1, 6 հունիսի 1992թ.: ԱՇ Աժ ընթացիկ արխիվ, գ. № 2:
- ԼՂՀ ԳԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ 1992Բ – ԼՂՀ ԳԻՆ որոշումը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության մասին» օրինագիծն առաջին ընթացքում ընդունելու մասին» օրենքը կիրարկելու մասին, Հ.Ն.-0051-1), 6 հունիսի 1992թ.: ԱՇ Աժ ընթացիկ արխիվ, գ. № 2:
- ԼՂՀ ՕՐԵՆՔԸ 1999 – «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ԼՂՀ օրենքը, «Մարտիկ», № 4, հունվար, 1999թ., 3-5:
- ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ 2016 – Խմբագրի պոստակ (Մարտիրոսյան Լ.), Սահմանադրությունը՝ պետության անվտանգության ու կայունության կարևոր գործոն, Ազատ Արցախ, 10 դեկտեմբերի 2016 թ., № 141, 1: <https://tert.nla.am/archive/NLA%20TERT/AzatArcax1998/2016/141.pdf>
- ԿԱՂԱՆԿԱՅՏՈՒՄՑԻ 1860 – Մովսես Կաղանկայտուացի, Պարունոթին Աղվանից, Հոս. Ա, Ի լոյս ընծայեց հանդերձ ծանոթությամբ Կարապետ վրդ. Շահնազարեան, Փարիզ, Ի գործատան Կ.Վ. Շահնազարեան, 1860, 183-189: https://haygirk.nla.am/upload/1512-1940/1851-1900/patm_axvanic1860_a.pdf
- ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ 2006 – Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտոնական տեղեկագիր, № 32(41), 15 դեկտեմբերի 2006 թ.:
- ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ 2017 – Արցախի Հանրապետության Սահմանադրություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն, Ստեփանակերտ, Դիզակ պլյուս, 2017:
- ՕՐԵՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ 2001 – Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1994-2001), Ստեփանակերտ, «Պոլիգրաֆ» ՊԲԸ, 2001, 21-22:
- КОНСТИТУЦИЯ 1994 – Конституция Республики Абхазия, <https://minjust-ra.org/документы> (25.06.2025-15:20):
- КОНСТИТУЦИЯ 2001 – Конституция Республики Южная Осетия, <https://parliamentroso.org/node/3567> (25.06.2025-15:45):
- ЛЕГИТИМНОСТЬ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ 1995 – *Легитимность Нагорно-Карабахской Республики в материалах и документах*, ред. Седа Вермишева (Библиотека Центра русско-армянских инициатив), Ереван, 1995.
- CONSTITUTION 2005A – *Constitution of the Turkish Cypriot Constituent State* <https://www.mfa.gov.tr/constitution-of-the-turkish-cypriot-constituent-state.en.mfa> (25.06.2025-17:10):

- CONSTITUTION 2005B – *The Constitution of the Republic of Somaliland*, http://www.somalilandlaw.com/body_somaliland_constitution.htm (25.06.2025-16:15):
- CONSTITUTION 2008 – *Constitution of the Republic of Kosovo*, https://mapl.rks-gov.net/wp-content/uploads/2017/10/1.CONSTITUTION_OF_THE_REPUBLIC_OF_KOSOVO.pdf (25.06.2025-16:40).
- CONSTITUTION 2016 – *Constitution of the Pridnestrovian Moldavian Republic*, <https://mid.gospmr.org/en/constitution> (25.06.2025-17:50).

Ուսումնասիրություններ

- ԱՎԱՆԵՍՅԱՆ 2022 – Ավանեսյան Ի., Հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացումը և ներքաղաքական զարգացումները ԼՂՀ-ում 2000–2007թթ., *ԱրՊՀ Գիտական տեղեկագիրք. Հասարակական գիտություններ*, 2022, № 2, 168–169:
- ԲԱԼԱՅԱՆ 2022 – Բալայան Վ., *Ազատագրության և պետականության համար պայքարի պատմական ու գաղափարական դրսևորումներն Արցախում (17-րդ դարի երկրորդ կես–2021 թվական)*, Երևան, Զանգակ հրատ., 2022, 289–344:
- ԳՐԻԳՈՐՅԱՆ 2017 – Գրիգորյան Հ., Վաչագան Բարեպաշտի Կանոնական Սահմանադրության նշանակության մասին, *ԿԱՃԱՌ փարեզիրք*, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2017, Գիրք 9 (107–118), 115–126:
- ԴԱՎԹՅԱՆ 2002 – Դավթյան Ս., *Ժողովրդավարության ուղիով (ԼՂՀ-ում անցկացված ընտրությունները (2000–2002 թթ.))*, Ստեփանակերտ, Ազատ Արցախ հրատ., 2002:
- ԼԻՊԱՐԻՏՅԱՆ 2022 – Լիպարիտյան Ժ., *Հայաստանի երրորդ հանրապետություն, Լեոնային Ղարաբաղի հակամարտություն (Նիւթեր պատմության համար)*, Երևան, Անտարես, 2022:
- ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2000 – Հարությունյան Մ.Ա., Երկրի պաշտպանունակության և անվտանգության բարձրացումը՝ ուշադրության կենտրոնում, *Մարտիկ*, № 6, 2000 թ., 3:
- ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2015 – Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991–1994 թթ., *Կաճառ (ԿԳԿ-ի փարեզիրք)*: Գիրք 5 (59–70), 2011, Շուշի, Կաճառ գիտական կենտրոնի հրատ., 2015, 57 (թվանշանային տարբերակը տես [https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Kacar2006/2011\(5\)_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Kacar2006/2011(5)_ocr.pdf)):
- ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2016 – Հարությունյան Ա., *Լեոնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Սահմանադրության արժեքային ատանձնահատկությունները և սահմանադրականության հերազմ զարգացման հիմնասիւղիները*, Երևան, Անտարես, 2016:
- ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2018 – Հարությունյան Ա., Արցախի Հանրապետության սահմանադրության մեկնաբանությունները որպես պետականության անրապետման կարևոր գործոն, *Գիտական Արցախ*, №1, 2018, 103–110:
- ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2022 – Հարությունյան Ա., Սահմանադրությունների ընդունման 1500-ամյա պատմությունն Արցախում, *Գիտական Արցախ*, № 1(12), 2022, էջ 10–26:
- ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2024 – Հարությունյան Մ., *Ռազմական շինարարությունը Արցախում 1991–2006 թթ.*, Երևան, Կաճառ գիտական կենտրոնի հրատ., 2024:
- ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 1967 – Հովհաննիսյան Ս., Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, *Պարմա-բանասիրական հանդես*, 1967, № 4, 265–274:
- ՀՈՎՍԵՓՅԱՆ 2012 – Հովսեփյան Վ., Վաչագան արքայի կանոնական Սահմանադրությունը, *ԼՂՀ դատական իշխանություն*, № 2(6), 2012, 35–56:
- ՀՈՎՍԵՓՅԱՆ 2016 – Հովսեփյան Վ., *Իրավունքը և արդարադատությունն Արցախում*, Ստեփանակերտ, Գիզակ պլյուս, 2016, 241–271:

- ՄԻՆԱՍՅԱՆ 2018 – Մինասյան Է., *Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991–2017)*, Երևան, ԵՊՀ հրատ., 2018:
- ՆԱԶԱՐՅԱՆ 2008 – Նազարյան Ա., Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշինության արդի փուլում, «Հայկական բանակ», 2008, հմ. 2–3, 36–45:
- ՆԱՍԻԲՅԱՆ 2010 – Նասիբյան Ս., ԼՂՀ ժողովրդավարության զարգացման և պետականության ամրապնդման ճանապարհին, Ստեփանակերտ, «Պոլիգրաֆ», 2010:
- ՇԻՐԻՆՅԱՆ 1999 – Շիրխանյան Վ., Սպառազինության համակարգի զարգացման խնդիրները և իրավական ապահովումը, *Հայկական բանակ*, 1999, № 2, 60–64:
- ՈՒՆՈՒԲԱԲՅԱՆ 1969 – Ուրուբաբյան Բ., Դարձյալ Ադվենի ժողովի գումարման տարեթվի մասին, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1969, № 6, 51–60:
- ՍՈՒՎԱՐՅԱՆ 2021Ա – Սուվարյան Յու., Զինված ուժերի ղեկավարումը ՀՀ հանրային կառավարման համակարգում, *Հայկական րնտեսագիտական հանդես*, 2021, № 2, 8–22:
- ՍՈՒՎԱՐՅԱՆ 2021Բ – Սուվարյան Յու., Զինված ուժերի ղեկավարումը ՀՀ հանրային կառավարման համակարգում, *Հայկական բանակ*, 2021, № 2 (108), 9–21:
- ՍՈՒՎԱՐՅԱՆ 2022 – Սուվարյան Յու., ՀՀ զինված ուժերի պետական կառավարման հիմնախնդիրներ, *Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա. Զեկույցներ*, 2022, հատոր № 122, № 1, 73–86: <https://doi.org/10.54503/0321-1339-2022.122.1-73>:
- ՍՈՒՎԱՐՅԱՆ 2024 – Սուվարյան Յու., Պետության զինված ուժերի կառավարման տեսական հիմնախնդիրներ, *Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա. Զեկույցներ*, 2024, հատոր № 124, № 1, էջ 49–66: <https://doi.org/10.54503/0321-1339-2024.124.1-49>:
- ՎԱԶԱԳԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 2017 – Վաչագան թագավորի սահմանադրությունը. Արցախից Արցախ, կազմ.՝ Ա. Դավթյան, Երևան, «ԿԵՏ» հրատ., 2017:
- ՕՀԱՆՋԱՆՅԱՆ 1998 – Օհանջանյան Մ., *Անկախության քայլերը: Արցախի Հանրապետությունում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991–1998)*, Ստեփանակերտ, «Սոնա», 1998:
- ADAMYAN 2023 – Adamyan K. The Constituent Assembly of Aghven and the Constitution Canonical as the Expression of the Armenian Constitutional Thought, *Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia*, 2023, №4 (112), 193–204.

Աղյուսակ 1. Արցախի Հանրապետության 2006 և 2017 թվականների Սահմանադրություններում զինված ուժերի սահմանադրական ինստիտուցիոնալացման համեմատական աղյուսակ

2006 թ. Սահմանադրություն	2017 թ. խմբագրությամբ
ԳԼՈՒԽ 1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	
<p align="center">Հոդված 11</p> <p>1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը:</p> <p>2. Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո:</p>	<p align="center">Հոդված 14.</p> <p align="center">Զինված ուժերը և պաշտպանությունը</p> <p>1. Արցախի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Արցախի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:</p> <p>2. Արցախի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են:</p> <p>3. Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Արցախի Հանրապետության պաշտպանությանը:</p>
ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
<p align="center">Հոդված 57</p> <p>Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանությանը:</p>	
<p align="center">Հոդված 60</p> <p>Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են.</p> <p>3) դրսևորել առանձնահատուկ հոգածություն հաշմանդամ ազատամարտիկների և զոհված ազատամարտիկների ընտանիքների նկատմամբ.</p>	<p align="center">ԳԼՈՒԽ 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</p> <p align="center">Հոդված 85.</p> <p>Պետության քաղաքականության հիմնական նպատակները</p> <p>Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝</p> <p>3) հայրենիքի պաշտպանության համար հաշմանդամ դարձած անձանց և զոհվածների ընտանիքների նկատմամբ առանձնահատուկ հոգածության դրսևորումը.</p>

<p>ԳԼՈՒԽ 3. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՐ Հոդված 61</p> <p>1. Հանրապետության Նախագահը պետության գլուխն է: 2. Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: 3. Հանրապետության Նախագահը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է:</p>	<p>ԳԼՈՒԽ 4. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՐ Հոդված 87. Հանրապետության նախագահի կարգավիճակը</p> <p>1. Հանրապետության նախագահը պետության գլուխն է: 2. Հանրապետության նախագահը գործադիր իշխանության ղեկավարն է:</p>
<p>Հոդված 68</p> <p>Հանրապետության Նախագահը՝ 10) կազմավորում է անվտանգության խորհուրդ և նախագահում այն, կարող է կազմավորել խորհրդակցական այլ մարմիններ. 13) զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում և ազատում է զինված ուժերի ու այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը. 14) Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին: Ձինված ուժերի օգտագործման կամ ռազմական դրություն հայտարարվելու դեպքերում իրավունքի ուժով գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ: Ռազմական դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով.</p>	<p>Հոդված 93. Հանրապետության նախագահի լիազորությունները Հանրապետության նախագահը՝</p> <p>21) պարզևստորում է Արցախի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում բարձրագույն զինվորական և պատվավոր կոչումներ, բարձրագույն դիվանագիտական և այլ դասային աստիճաններ.</p>
	<p>Հոդված 94.</p> <p>Հանրապետության նախագահի լիազորությունները ազգային անվտանգության բնագավառում</p> <p>1. Հանրապետության նախագահը Արցախի Հանրապետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է: 2. Հանրապետության նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է: 3. Հանրապետության նախագահը նշանակում և ազատում է զինված ուժերի ու այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը: 4. Ազգային անվտանգության բնագավառում իր լիազորությունների իրականացմանն աջակցելու նպատակով Հանրապետության նախագահն իրեն կից ձևավորում է խորհրդակցական մարմին՝ Անվտանգության խորհուրդ, և նախագահում այն:</p>

<p style="text-align: center;">ԳԼՈՒԽ 4. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ Հոդված 94</p> <p>1. Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝</p> <p>1.4) որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին: Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու որոշումը կայացնում է Հանրապետության Նախագահը:</p> <p>2. Ազգային ժողովը կարող է դադարեցնել զինված ուժերի օգտագործումը, ռազմական և արտակարգ դրությունը:</p>	<p style="text-align: center;">ԳԼՈՒԽ 5. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ Հոդված 130.</p> <p>Պատերազմ հայտարարելը և խաղաղություն հաստատելը</p> <p>1. Ազգային ժողովը Հանրապետության նախագահի առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է ընդունել պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին որոշում:</p> <p>2. Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Հանրապետության նախագահը:</p> <p style="text-align: center;">Հոդված 131.</p> <p>Ռազմական դրությունը</p> <p>1. Արցախի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմի դեպքերում Հանրապետության նախագահը հայտարարում է ռազմական դրություն, ուղերձով դիմում է ժողովրդին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք:</p> <p>2. Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:</p> <p>3. Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել ռազմական դրությունը կամ չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:</p> <p>4. Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել Սահմանադրության 93-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան ընդունված հրամանագիրը՝ դրա ընդունումից հետո՝ 48 ժամվա ընթացքում:</p> <p>5. Ռազմական դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p>
--	--

Աղյուսակ 2. Զինված ուժերի սահմանադրական ինստիտուցիոնալացման միջազգային փորձի համադրական աղյուսակ

Պետություն	Սահմանադրական նշում զինված ուժերի մասին	Գերագույն հրամանատար	Արտաքին օգտագործման կարգավորում	Ներքին կիրառման սահմանա-փակումներ
Արցախի Հանրապետություն (2017)	Զինված ուժեր	Հանրապետության նախագահը	Չի հստակեցվում	Նշված չեն
Արցախի Հանրապետություն (2006)	Անվտանգության երաշխիք, ինքնիշխանության պահպանման գործիք	Հանրապետության նախագահը	Չի հստակեցվում	Նշված չեն
Հարավային Օսիա	Պաշտպանության, ազգային անվտանգություն, ներքին գործեր	Նախագահ	Չի հստակեցվում	Նշված չեն
Աբխազիա	Պաշտպանության և անվտանգային համակարգ՝ սահմանադրական կարգավորման ներքո	Նախագահ	Չի հստակեցվում	Նշված չեն
Մերձդնեստր	Մանրամասն կարգավորում	Նախագահ	Խորհրդարանի որոշմամբ	Նշված չեն
Սոմալի	Անվտանգության և հասարակական կայունության գործառույթ	Նախագահ	Խորհրդարանի թույլտվությամբ	Օգտագործումը սահմանափակվում է՝ հակաօրինական գործողություններից
Հյուսիսային Կիպրոս	Ինտեգրված է Թուրքիայի Զինված ուժերին	Նախագահ	Չի հստակեցվում	Օգտագործումը հակաօրինական նպատակներով՝ արգելված և հանցագործություն
Կոսովո	Զինված ուժերը՝ որպես ինքնապաշտպանության և միջազգային համագործակցության մարմին	Նախագահ	Միջազգային գործընկերների համաձայնությամբ	Օգտագործումը սահմանափակվում է մարդու իրավունքների պաշտպանությամբ

Այս համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ չճանաչված և մասնակի ճանաչված պետությունների սահմանադրություններում միտում կա զինված ուժերը դիտարկել ոչ միայն որպես ռազմական կառույց, այլև՝ որպես պետական ինստիտուցիոնալ ինքնության ամրապնդման գործոն:

Mher Harutyunyan

PhD in History, Associate Professor

Institute of History, National Academy of Sciences of Armenia

History Museum of Armenia

mherharout@gmail.com

FROM THE HISTORY OF THE CONSTITUTIONAL INSTITUTIONALISATION OF THE ARMED FORCES IN THE REPUBLIC OF ARTSAKH

Keywords: Artsakh, constitution, army, institutionalisation, defence, security, statehood

This article undertakes a comparative constitutional analysis of the 2006 and 2017 Constitutions of the Republic of Artsakh, with a particular focus on the legal and institutional entrenchment of the Armed Forces. The study situates the constitutional treatment of the military within a broader historical and political context, where state-building intersects with conflict legacy, unrecognised sovereignty, and institutional consolidation. The relevance of the topic is underscored by the persistent ambiguity surrounding the international legal status of Artsakh, and the vital role played by its security structures in maintaining internal order and projecting claims to self-determination.

The article traces the evolution of constitutional formulations concerning the armed forces—from their initial normative inclusion as guarantors of peace and constitutional order in 2006, to a more structured and strategic institutionalisation in 2017. These developments are interpreted not merely as linguistic or legal refinements, but as deliberate responses to evolving domestic governance needs and external security pressures. By drawing on both constitutional texts and institutional frameworks, the analysis uncovers shifting paradigms of military oversight, terminology, and functional attribution.

Furthermore, the article situates Artsakh's experience within the comparative framework of *de facto* and unrecognised states, identifying common patterns in how these entities codify and legitimise armed institutions. The study argues that such constitutional entrenchments serve not only security objectives but also act as mechanisms of symbolic sovereignty and nation-building. Ultimately, the article contributes to the scholarship on post-conflict constitutionalism and the institutionalisation of military structures under conditions of contested statehood.

Мгер Арутюнян

Кандидат исторических наук, доцент

Институт истории Национальной академии наук Армении

Музей истории Армении

mherharout@gmail.com

ИЗ ИСТОРИИ КОНСТИТУЦИОНАЛИЗАЦИИ ВООРУЖЁННЫХ СИЛ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

Ключевые слова: Арцах, конституция, армия, институционализация, оборона, безопасность, государственность

В представленной статье проводится сравнительный анализ Конституций Республики Арцах 2006 и 2017 годов, с акцентом на юридическое и институциональное закрепление статуса Вооружённых сил. Актуальность темы обусловлена как неопределённым международным статусом Арцаха, так и значением военных институтов в процессе институционального становления и обеспечения внутренней стабильности. Конституционные изменения рассматриваются в контексте эволюции государственного мышления, адаптации к внешнеполитическим вызовам и стремления к легитимизации суверенитета.

В 2006 году Конституция зафиксировала статус армии как гаранта безопасности и конституционного порядка, что отражало этап постконфликтного стабилизационного строительства. Конституция 2017 года представляет более институционализированный, стратегически осмысленный подход, где вооружённые силы становятся неотъемлемым компонентом системы государственной безопасности и символом политико-правовой субъектности.

Особое внимание уделяется терминологическим различиям, модели контроля, а также интеграции вооружённых структур в конституционную архитектуру. Автор подчёркивает, что подобные изменения не являются сугубо техническими, но отражают углубление государственности и развитие внутреннего правового суверенитета в условиях международной непризнанности.

В завершение, опыт Арцаха рассматривается в сравнении с другими непризнанными или частично признанными государствами, где вооружённые силы часто выступают ключевым элементом в процессе формирования национальной идентичности и конституционной легитимности. Статья вносит вклад в исследования постконфликтного конституционализма и правовой институционализации военных структур в условиях спорной государственности.